

“ԲՈՂ ՏՈՒՔ՝ ՄԱՆԻ ՏՆՈՐ ԱՐ ԻՆՍԻ ԳԱՆ.” ԴՈՒԿ ԺԸ 16.

ՀԱՏՈՐ ԼԵ.

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ, ՍԵՊՏԵՄԲԵՐ 1, 1906

ԹԻՒ 9

**ՓՈԹՈՐԿԻ ՊԵՏՐԱՀԱՒ**

Այս է ծովային թռչուն մը որ հազիւ կաշաղակի մը մեծութիւնն ունի, բայց թեւերը անոր թեւերէն աւելի ուժեղ են և սրունքները աւելի երկայն։ Ոտքերը մաշկապատ են նման բազերու և բոլոր ծովային թռչուններուն


նոսին ամէն մասերուն մէջ։ Ովկիանոսի այնպիսի մասեր կան ցամաքէն հեռու, ուր ուրիշ թռչուններ երբեք չեն տեսնուիր, բայց պետրահաւը կը գտնուի այն տեղերը, և կարծես չկրնար յոգնիլ։ Մը Պրըն կ'ըսէ թէ իր բոլոր ճամբորդութիւններուն մէջ բնաւ չտեսներ

կը ծծէ։ Երբ առաջին անգամ Ովկիանոսէն կ'անցնէինք, մեր փափաքներէն մէկն էր փոթորկի պետրահաւը տեսնել, և մեր այդ փափաքը լեցունեցաւ։ Կը կարծենք թէ հազուադէպ բան է որ Ովկիանոսի ճամբորդութիւն ընող մէկը չտեսնէ այս հետաքրքրաշարժ թռչուններէն։

**ԳՈՐԾՈՂ ՏՂԱՆ**

Կը զգան, ով պատանի, թէ գործը գժուար է։ Օրուան մէջ ժամերով պիտի աշխատիս, աշխատութիւնդ շատ է և ընդունած վարձքդ քիչ։ Շատ թուան մը վարձքդ հաղիւ կը բաւէ լարաթուան մը պէտքերուդ։ Երբեմն կարկտուած տարատ և մաշած վերարկու կը հագնիս։ Գու գործատերդ շատ գործ կ'ակնկալէ քեզմէ։ Դրացիիդ տղան լաւ կը հագուի և գրպանը միշտ ստակ ունի։ Անոր հայրն ու մայրը կը փայփայեն զսիկա, մինչ դուն վեց օր կ'աշխատիս ապրուստդ ճարելու համար։ Հոգ չէ, պատանեակ, դուն կը ստանաս փորձառութիւն մը, զոր անիկա աւելի ուշ պիտի ստանայ։ Վասն զի ուշ կանուխ ան ալ պիտի ստիպուի կեանքին ստոյգ ճակատամարտը կուռելու։ Եւ դո՛ւն շահաւոր ես։ Մինչ հիմա կեանքը հեշտ է անոր, ինք զուրկ է այն վարժութենէն և կրթութենէն որուն հրաքանչիւր զինուոր։ Դուն ինքզինքդ կը պատրաստես։ Ան առանց պատրաստութեան պիտի երթայ և իյնայ։

Գործը մեծ օրհնութիւն է։ Դուն հիմա չես տեսներ ասիկա, բայց օր պիտի գայ երբ պիտի բսես թէ բարեազդ էի տղայութեանս օրերը, ինչու որ ստիպուած էի գործել։ Վասն զի չես կրնար զօրութիւն ստանալ բաներ ընելու, առանց ընելու



ուտքերուն, և Մը Պրըն, որ տասնըհինգ տարի նաւաստի եղած է և յոյժ շահեկան յողուածներ գրած է ծովու վրայ, կ'ըսէ թէ անոր ոտքերը կարծես սև մետաքսէ շինուած են։ Պետրահաւը միշտ կը թռչի ջուրին երեսին մօտէն, նման այն թռչունին որու թռչիլը այնքան յաճախ կը տեսնուի վոսփորի վրայ և որ արդարև պետրահաւին մէկ տեսակն է։ Այս թռչունը փոթորկի պետրահաւ կը կոչուի փոթորկիները բանի տեղ չդնելուն համար, և կը տեսնուի Ովկիա.

աւ անոնցմէ մէկը որ նստի ջուրին վրայ, այլ գիշեր և ցերեկ կը թռչի անդադար։ Երբ ուտէ, չնստիր ծովուն վրայ, այլ կը սաւառնի օդին մէջ և իր ոտքերը կը կտցէ, ինչպէս թիթեռնիկ մը կը թռչտի ծագիկ մը վրայ և

զանոնք: Նայէ քու ճանցած յաջող մարդոց վրայ: Տեղեկացիր անոնց պատմութեան: Անոնց գրեթէ ամէն մէկը տղայութեան ատեն ստիպուած էր գործել: Անոնք իրենց մկանները պինդացուցին սաստիկ աշխատութեամբ, և իրենց ուղեղները սրեցին իրենց չորս կողմը գիտելով:

Գործը մարդ կը շինէ: Բաղդը սովորաբար անյաջող կ'ելլէ: Աշխատութիւնը զրեթէ միշտ կը յաղթէ: Գործի մէջ յաջողելու համար մարդ պէտք է որ յաղթէ արգելքներուն, Ոյժ և ջիղ սաստիկ աշխատութեամբ ձեռք կը բերուին: Մարդ ըլլալու համար այնչափ պէտք է քաջութիւն որ չափ խելք: Դժուարութիւնները միշտ արգելք չեն, անոնք օգնութիւն են շատ անգամ: Դուն ասիկա աւելի աղէկ պիտի հասկնաս երբ քսան տարեկան ըլլաս: Նոյն ժամանակ յօժարութեամբ լսէ քսան տարի ապրողներու փորձառութիւնները, և ուշադրութիւն տուր անոնց խրատներուն:

ՆՐ ՄԱՅՐԸ

Ասկէ քիչ առաջ երիտասարդի մը պաշտօն տալու համար դիմում եղախումբ մը մարդոց որոնց ամէն մէկը համբաւաւոր անձեր էին:

Պաշտօնը այնպէս կարևոր էր որ իմաստութիւն, տոկոսութիւն և ընտիր նկարագիր կը պահանջէր: Իսկ գալով երիտասարդին, առարկութիւն չբերուեցաւ անոր դէմ: Անիկա ունէր բոլոր պահանջուած յատկութիւնները և կատարելապէս յարմար էր գործին: Բայց անոր հօրը վարքին դէմ առարկութիւն կար. և մարդիկը սապէս ըսին, Մենք չենք կրնար այդ երիտասարդին պաշտօն տալով մեզ վտանգի ենթարկել:

Ճիշդ այդ ատեն խումբին մէկ ուրիշ անդամը սկսաւ խօսիլ. ան ալ ունէր ըսելու բան մը, որ էր երիտասարդին մօրը պատմութիւնը: Երբ լմնաց խօսքը, այլ ևս երբեք առարկութիւն չմնաց երիտասարդին ընդունուելուն դէմ: Հոն գտնուողներէն ամէն մէկը յօժարութիւն յայտնեց այսպիսի կնոջ մը որդւոյն վստահել: Երիտասարդը պաշտօնին վրայ դրուեցաւ, և իր գործով արդարացուց ընտրութիւնը:

Այս պատմութիւնը նոր չէ, աշխարհին չափ հին է, բայց անոր պարզ և անմխտութիւնը երբեք չհինար: Ուր որ կը գտնուի տուն մը,

հոգ չէ որչափ պղտիկ կամ անզարգ ըլլայ, մեծ բեռ մը կայ մօր, կնոջ կամ քրոջ համար որ է այդ տան սիրտը: «Աստուծոյ պէտք են շատ կիներ իր գործին համար, որպէս զի մեզմէ շատեր աշխարհ երթան և աշխատին», ըսաւ կին մը: Եւ իրօք Աստուծոյ պէտք է անոնց ամէն մէկը: Պէտք է որ անոնք հաստատապէս որոշեն թէ երբեք անհաւատարիմ պիտի չըլլան այն գործին մէջ որու զանոնք կը կանչէ Աստուած:


ԼՈՁԱՆ

Այս գեղեցիկ տեսարանը կ'երևի Լոզանի վիին դպրոցին պատահանէն: Դպրոցը հիմնեց 1839ին ֆրիստոնեայ մեծ աստուածաբան և մատենագիր Ալբրասանըրը վիին, որ տեղին բնիկներէն մէկն էր: Անոր գիրքերէն

նախ տեսնուիլ հեռուն Մոն Պլանը և անոր մօտ գտնուող Գաղղիական միւս լեռներու գագաթները: Միւս կողմը կ'իման յուրա լեռները, որոնք Գաղղիոյ այդ մասին արեւելեան սահմանը կը կազմեն: Բաղաքին ամէնէն շահեկան բաներէն մին է «Մեծ Կամուրջը», որ ձգուած է հեղեղատին վրայ որու մէջէն կը վազէ Յլոն գետը: Այս կամուրջը իրարու կը կապէ քաղաքին երկու թաղերը: Գլխաւոր շէնքերէն են Մայր եկեղեցին որ 600 տարիէ աւելի հին է, և առաջ կաթողիկոսներու կը վերաբերէր և հիմա Բողոքականներուն, նաև Բերդը, Ակադեմիան, կոյրերու ապաստանարանը և քաղաքին գրատունը:



ԽԱԻԱՐԻՆ ՄԷՋ ԼՈՅՍ  
Քանի մը երկիրներու, զոր օրինակ



երկուրը, մին քարոզութեան վրայ և միւսը հովուական պաշտօնին վրայ, Գաղղիերէնէ Անգլիերէնի թարգմանուեցան, և Ամերիկայի աստուածաբանական ճեմարաններուն մէջ շատ կը գործածուէին յիսուն տարի առաջ: Աղջիկներու դաստիարակութիւն չկար անցեալ դարու սկիզբները, և վիին այն մարդոց մէկն էր որոնք խորապէս կը զլային անոր պէտքը: Դպրոցը 50 աշակերտուհիով սկսաւ, և թուականէ չորս տարի առաջ թիւը 350ի բարձրացած էր: Նոր և շքեղ դպրոց մը շինուեցաւ 1898ին: Դպրոցին հիմակուան պետն է Մատուաղէլ Կոտէ, համբաւաւոր ուրիշ աստուածաբանի մը, Յրէտէրիք Կոտէի, դուստրը:

Ափրիկէի մէջ կան ընդարձակ մասեր, ուր միայն մէկ լեզու կը խօսուի, և երբ անգամ մը Աստուծոյ Գիրքը այդ լեզուին թարգմանուի, կ'երթայ այնպիսի տեղեր ուր գացած չեն ճամբորդներ և միսիոնարներ, և լոյս կը տանի իրեն հետ:

Բոպըրթ Մոֆաթ իր Մեծնարկու Աշխարհի մասեր և Տեսարաններ Հարաւայն Աքրիէն ճիւղ անուն գործին վերջերը կը պատմէ թէ Նոր Կտակարան մը գտած է այնպիսի տեղ մը ուր գրեթէ չէր ակնկալեր գտնել: Իր ընկերներուն հետ ըրած առաջին ճամբորդութիւններէն մէկուն մէջ կռապաշտներու գեղ մը եկաւ Օրէնճ գետին եղերքը Նամաքուա Լէնտի և կրիքուա երկրին մէջ տեղ: Սապէս կ'ըսէ:

Մենք հեռուն ճամբորդած էինք և անօթի, ծարաւ ու յոգնած: Առիւծ

Լոզան աւելի քան 50,000 բնակչով քաղաք մըն է: Անկէ վարը կայ այն գեղեցիկ լիճը, որմէ անդին կըը

ներու որս ըլլալէ վախճալով աւելի ազէկ սեպեցինք զիշերը գեղը մնալ քան շարունակել մեր ճամբորդութիւնը: Գեղացիները կոչող կերպով մեզ հեռուն տեղ մը առաջնորդեցին ուր պիտի մնայինք գիշերը: Զուր ուզեցինք, բայց անոնք տալ չուզեցին: Ես ճաքէթիս վրայ մնացած երեք չորս կոճակները տալ առաջարկեցի քիչ մը կաթի համար, այս ալ մերժուեցաւ: Խորհեցանք թէ անօթի ուրիշ գիշեր մըն ալ պիտի անցընէինք ջրէն հեռու, թէ և գետին բաւական մօտ կը գտնուէինք: Դժուար վիճակի մէջ էինք, վասն զի եթէ նորէն մերժուէինք, գեղացիներուն ընկերացքը կասկած պիտի արթնցնէր մեր մէջ:

Երբ վերջապէս մտեցաւ, կին մը եկաւ բարձունքէ մը որուն անդիի կողմը կը գտնուէր գեղը: Կինը իր գլխուն վրայ կը կրէր խուրձ մը փայտ և ձեռքն ունէր ամանով կաթ, և առանց իր շրթունքը բանալու մեզի տուաւ կաթը, վար դրաւ փայտը և գեղ վերադարձաւ: Յետոյ անգամ մըն ալ եկաւ իր գլխուն վրայ կաթսայ մը և մէկ ձեռքը ոչխարի սըրունք մը և միւս ձեռքը կուժ մը ջուր ունենալով: Կինը նստաւ առանց խօսք մը խօսելու, կրակը պատրաստեց և միտը անոր վրայ դրաւ:


Կրկին և կրկին հարցուցինք թէ ո՞վ է, Լուս մնաց, մինչև որ շատ աղաչեցինք որ մեզի բռէ թէ ի՞նչ է օտարականներու իր ցուցած այս անակնկալ մարդասիրութեան պատճառը: Անոր սև ալտէն արցունքի կաթիլ մը գլորեցաւ երբ սապէս պատասխանեց. «Ես կը սիրեմ զԱնիկա որու ծառաններն էք դուք, և անշուշտ իմ պարտականութիւնն է բաժակ մը պաղ ջուր տալ Անոր անունով: Սիրտս լեցուն է, անոր համար չեմ կրնար պատմել ուրախութիւնը զոր կը զգամ ձեզ տեսնելով աշխարհի այս հեռուոր տեղը:»

Երբ քիչ մը տեղեկացանք անոր պատմութեանը, և թէ ինք առանձին լոյս մըն էր որ կը վառէր այդ խաւար տեղին մէջ, հարցուցի թէ ի՞նչպէս կը պահէր Աստուծոյ կեանքը իր հոգւոյն մէջ սուրբերուն հաղորդութենէն բուրրովին հեռու գտնուելովն հանդերձ: Կինը իր զրպանէն հանեց Հոլանտերէն նոր կտակարան մը, զոր ընդունած էր Մը. Հէլմէ երբ անոր դպրոցին մէջ կը գտնուէր տարիներ առաջ, և երբ դեռ ստիպուած չէր իր զանազան

առնչութիւններուն պատճառաւ այսպէս քաշուած ապրիլ:

«Ո՞ր է», ըսաւ, «աղբիւրը որմէ կը խմեմ. այս է այն իւրը որ կը վառէ լամբարս:» Նայեցայ այն թանկագին նշխարին վրայ որ տպուած էր Բրիտանական և Արտաքին Աստուծաշնչի Ընկերութեան ձեռագիր: Եւ ընթերցողը կրնայ ըմբռնել թէ ես և իմ հաւատացեալ ընկերներս ի՞նչ զգացինք երբ պատահեցանք այս աշակերտին, և մեր համակրանքներն աղօթքները միասին մատուցինք մեր երկնաւոր Հօր ամօռին առջև: «Երկինքի բարձրութեանը մէջ Աստուծոյ փառք, ու երկրի վրայ խաղաղութիւն, մարդոց մէջ հաճութիւն:»

Որչափ կարևոր է կենաց խօսքին տարածուիլը երկրի կզգբունն մէջ, որոնք խաւարի ու մահուան շուքին մէջ կը նստին: Թող ամէն մէկ քրիստոնեայ մանուկ աղօթէ և աշխատի կենաց խօսքը տարածելու, վասն զի



կան կեանքին վրայ անոր տուած յայտնութեան, կատարելագոյն կը հաւատային սակայն թէ նորէն պիտի ապրին մահէն ետքը և թէ այս կեանքին մէջ հարկ է պատրաստութիւն տեսնել հանդերձեալ կեանքին համար:

ԻՆՉ ԸՍԱԻ ՏՈՐԱ

Տորա փոքրիկ աղջիկ մըն էր և իր մօրը հետ կը բնակէր գեղ մը պղտիկ տնակի մը մէջ: Տնակին ետեւը պարտեղ մը կար, և պտուղներն ու բանջարեղէնները զորոնք Տորայի մայրը կը հանէր ու կը ծախէր, շատ մը ստակ կը բերէին թիթեղ տուփին մէջ որ հանդերձի դարակին վերի աչքին մէջ կը կենար: Այսօր Տորա տնակին առջևի ծաղիկներուն մէջերը կը խաղար, մինչ մայրը պարտեղին մէջ կը շրջէր: Խաղացած միջոցին անոր ուկի գլխուն վրայ կ'իջնային արևուն ճառագայթները, և սիրուն կերպարանք մը կու տային անոր, իբր թէ ուրախ ըլլալով որ փայլուն գետեզրին վրայ խաղի ընկեր մը գտած էին, և ահա ձիւտոր մարդ մը կեցաւ աղջկան առջև: «Բարի լոյս, փոքրիկ աղջիկ», ըսաւ մարդը ձիւն վար ցատկելով և ժպտելով: Տորա վեր նայեցաւ, և «Բարի լոյս», ըսաւ համեստութեամբ, վայելչապէս խոնարհելով քիչ մը:

այս աշխատութիւնը պարագ չէ Տէրոջմով:

ՉՈՐՍ ՀԱՋԱՐԻ ՏԱՐՈՒԱՆ ՆԱԽԱԿ ԸՆԴՈՒՆԱԿ

Գերման հնախօսական ընկերութիւն մը, որ Եգիպտոսի մէջ պեղումներ կը կատարէ, չորս հազար տարուան գերեզմանի մը մէջ գտաւ նաւակի մը օրինակը (մօտէլ): Գերեզմանը թանաք նուրով արքայազուն քուրմի մը գերեզմանն էր: Հոն էր անոր մուսնան ճերմակեղէն կտաւի մէջ փաթթուած գլխուն մազերը սքանչելի կերպով պահուած էին: Մարմինը ձախ կուշտին վրայ պառկած էր և երեսը արևելք կը նայէր, այսինքն դէպ ի ծագող արևը: Մուսնային քով կար քուրմին փայտէ պղտիկ մէկ արձանը, որ անոր հոգին կը ներկայացնէր միւս աշխարհը մտնելու վրայ: Կը կարծուի թէ նաւակը կը ցուցնէ քուրմին ճամբորդութիւնը դէպ ի միւս աշխարհը: Այդ հին Եգիպտացիները, թէ և տգէտ էին ճամբորտ Աստուծոյն և յաւիտենա

«Թող կու տաք որ ձեր պատկերը քաշեմ», ըսաւ օտարականը, և խօսելու միջոցին իր ուսէն վար առաւ կաշիէ քառակուսի տուփ մը: Տորա մարդուն նայեցաւ տարակուսանքով: «Ատիկա վնաս կու տայ արդեօք», հարցուց: Ելբեք չէր տեսած քոտաք (լուսանկարչութեան տուփ), ոչ ալ լսած էր անոր վրայով: Մտածեցէք. անիկա կը նմանէր այն տուփին, զոր բժիշկը իր քովն ունէր երբ վիրաւորուեցաւ հայրիկը որ հիմա դացած էր անդառնալի կերպով, և մայրիկը բաւական լացած էր, և Տորայի գուլպաններուն վրայի կարկտանները աւերցած էին: Օտարականը ապահովաց աղջիկը թէ վնաս մը պիտի չըլլար, միայն թէ իրեն ընելիքն էր անշարժ կենալ:

Ուստի Տորա իր փոքրիկ ձեռքերը իր ետին տարաւ և ստքերը իրարու քով բերաւ ինչպէս կ'ընէր Կիրակի օրերը երբ կ'ըսէր, «Տէրը իմ Հովիւս է:» Մինչև անգամ ըսաւ ալ այդ բառերը: Չա՛թ, նորէն Չա՛թ, և աղ-

նիւ մարդը ըսաւ աղջկան թէ ա՛լ կըրնայ չարժիլ: Եւ քանի մը վայրկեան յետոյ մարդը ձին հեծաւ և գնաց:

Մայրը անհանգիստ եղաւ երբ Տորա վազելով եկաւ և ըսաւ թէ «քաջուեցայ»: Բայց մայրը սովորած ըլլալով Տորայի այս տեսակ խօսքերուն, ա՛լ չխորհեցաւ անոր վրայ: Անցան քանի մը ամիսներ և ձմեռ էր: Տորայի խաղի ընկեր պզտիկները գացած էին, և փոքրիկ թիթեղ սուսփին մէջի ստակը երթալով պակսեցաւ, քիչցաւ, և իւրօք այնչափ քիչցաւ որ բաւական պիտի չըլլար գնելու բժիշկին ըսած դեղը զոր մայրիկը գործածելու էր իր հիւանդութեան համար: Օր մը երբ մայրիկին հազը սովորականէն աւելի սաստկացած էր և Տորա իր կուրծքը մեծ դողոնց մը բռնուած կ'օգնէր, դուռը զարնուեցաւ: Նամակ մը Զարմանալի բան էր այս փոքրիկ տան նամակ գալը: Մայրիկը բացաւ նամակը դողդոջուն մատերով: Նամակին մէջ սապէս գրուած էր.

Սիրելի Տիկին, Ամիսներ առաջ ձեր փոքրիկ աղջկան պատկերը քաջցի ձեր տնակին առջև: Պատկերը լուսանկարչական մրցման մը դրի և առնիկ շահեցաւ առաջին մրցանակը: Փառքը ինձի, բայց ստակը ձեր փոքրիկ աղջկան կը վերաբերի: Ահա զայն կը ղրկեմ նամակիս հետ, նաև պատկերէն օրինակ մը:

Յուսալով թէ ձեր դուստրը նորէն իբրև օրինակ գործածելու արտօնութիւնը պիտի վայելեմ, մնամ, ևն.:

Այո, հոն էր պատկերը և անոր հետ հինգ հատ հինգ հինգ տալարնոց նոր թղթադրամներ: Մայրիկին աչքերը թրջեցան երջանկութեան արցունքներով: Իրեն քով կանչեց Տորան, և ըսաւ թէ ինք չուսով պիտի ազէկնայ, վասն զի իր փոքրիկ աղջիկը վաստակած էր դեղ գնելու ստակը: «Բայց ես անչարժ կեցայ միայն, ուրիշ բան չըրի, մայրիկ» ըսաւ Տորա: «Այո, սիրելիս» «Հասկցայ հիմա, մայրիկ, բանը այն չէր ինչ որ ըրի, հապա ինչ որ ըսի այն ատեն» «Ինչ էր ըսածդ, սիրելիս» «Տէրը իմ Հովիւս է», ըսի:

ՉԱՐՄԱՆԱԼԻ ՓՈՎ ՄԸ

Այն միջոցին երբ Տորթհի այցելութեան գացած էր Նիւ Եորք իր մօրաքրոջ, շատ մը նամակներ գրեց

տունը իր մօրը, և հետևեալն է անոնց մէկը.

«Սիրելի մայրիկ, երէկ եկեղանաբանական եղբորսական Պարտէզը գացինք, և հոն շատ մը կենդանիներ տեսանք: Բայց անոնց մէջ ամէնէն աւելի սիրեցի խաղաղող փիղը: Հէթթի կը կոչուի այս փիղը, նաև Պարտէզին Գեղեցիկը, որու համար մարդիք կ'ըսէ թէ անոր նման սրամիտ փիղ տեսած չէ: Գերմանիայէ բերուել է այս փիղը իբր երեք տարի առաջ, և իբրև փիղ բաւական մանր է, վասն զի միայն իբր 1,200 լիպրա կը կշռէ: Երբ եկաւ, Անգլիայէն մէկ բառ անգամ չէր հասկընար, և պէտք էր որ առաջ այդ լեզուն սորվէր: Բայց ի Գերմանիայէ ուրիշ բան չէր լսած: Երբ կը գիտնար թէ ինչ կը նշանակեն այս ինչ բառերը, մարդիք կը սկսէր անոր խաղեր սորվեցնել, և հիմա կրնայ շատ մը բաներ ընել: Կը պառկի, երբ որ մարդիք հրամայէ. սնտուկի մը վրայ կ'ելլէ, ճաշի զանգակը կը հնչեցնէ: Մարդիք կ'ըսէ թէ երբ անոր սորվեցուց զանգակը հնչեցնել, ձայնը այնչափ սիրեց որ, ինք դժուարութիւն կրեց մինչև որ զանգակը մէկդի առաւ: Նուազարանի ձայնին համեմատ կը պարէ, բայց երաժշտութիւն չկայ անոր պարին մէջ. սոսկալի է անիկա: Այն ատեն կը կանգնի ետեի սրունքներուն վրայ և ժուռ կուգայ: Մարդիք ըսաւ թէ երկու սրունքներուն վրայ քաղող ուրիշ միայն մէկ փիղ գիտէ, և թէ այդ փիղը այնքան ծանր էր որ չէր կրնար շարունակել այդպէս քալել: Բայց ասիկա երբեք նեղութիւն չտուաւ անոր, թէև այդպէս ընել սորվելու համար քանի մը օրեր անցան: Այս կերպով քալելէն ետքը մարդիք փղին կու տայ չաքարի մեծ կտոր մը և կամ անոր սիրած ուրիշ մէկ բանը: Մարդիք կ'ըսէ թէ անիկա շատ երկոտ է, բայց ճիշդ այնքան բարի է որքան կարելի է իրեն, և թէ ինք միշտ կը ջանայ ընել ճիշդ ինչ որ կ'ըսէ փիղին: Երբեք չձեռքեր զայն, այլ միշտ քաղցր եղած է անոր և հոգ կը տանի զանիկա չվախցնելու: Կը կարծէ թէ այդ կենդանին արդարութեան և իրաւունքի ճանաչողութիւն ունի:

Պարտէզին մէջ պզտիկ որբ գառ մը կայ, և Հէթթի ու գառը շատ բարեկամ են: Փիղը գետնէն վեր կը վերցնէ գառը իր պատիճով և կ'օրէ զանիկա առաջ և ետ, և յետոյ վար կը դնէ գետնին վրայ: Կը թուի թէ գառը կը սիրէ այսպէս օրուիլ, երբեք

չվախնար: Միևնոյն ամանէ կ'ուտեն երկուքն ալ, և վանդակին մէջ կը խաղան կատուի ձագերու պէս: Կը յուսամ թէ պիտի կրնամ նորէն երթալ տեսնել Հէթթին տուն գալէս առաջ:

Սէր և համարյոյնք բոլոր անեցիներուն, և մանուաւնդ Ձեր սիրելի անձին,

Ձեր խանդակաթ դուստրը,  
ՏՈՐՈՒՅԻՆ՝



ՅՈՒՒՍԻ ՀԱՆՆՈՒԿԻՆ ՊԱՏԱՍԻԱՆԸ

«Որդեակ իմ, Տէրովն ու թագաւորէն վարցիք, և իւրովարք մարդոց հետ մի խառնուիք» Առակ. Ի. 21:

Լուծեցին. Կ. Պոլս. — Երուանք Տ. Իննճեան, Վարդէնի Գ. Արշէն: Բարսեղ. — Երուանք Յ. Յուրուճեան: Արթուր. — Տէրուհի Ի. Չարհեան: Թոմ. — Բ. Աբրահամեան, Տէրուհի. — Դ. Տէր Ղազարեան, Կարապետ Ս. Աղաճանեան, Պարզև Փոփազեան: Խոսրէր. — Վառձապուհ Ս. Նէտիւրեան, Աւետիս Ասատուրեան, Եղիա Մարգարեան, Խաչատուր Համբարձումեան, Խաչատուր Յ. Անտանեան: Թոմ. — Յովսէփ Ն. Ջըրիկեան: Մուսիս. — Խորոյէլ Տէր Յովսէփեան: Նեւ Եօր. — Բ. Տալլարեան:

ՀԱՆՆՈՒԿԻՆ	ՍՈՒՐԲ	ԳԻՐՔԷՆ
..	0	..
..	0	..
..	0	..
..	0	..
..	0	..
..	0	..
..	0	..
..	0	..
..	0	..
..	0	..
..	0	..
..	0	..

1. Երուանդէմի մօտ աղբիւր մը: 2. Մեծ մարգարէ մը: 3. Անորոշ դերանուն մը: 4. Հայ տառ մը: 5. Բայթին մէկ մասը: 6. Սաղմուտը գութեան եղանակի մէկ մասը: 7. Թուրքիոյ զբոսի երկիր մը: 8. Երբեք մը անուն: 9. Քաղաք ուր Պոլսոյ մէկուկէս տարի մնաց: 10. Մարգարէի մը ծառան: 11. Որու ինքզինք նմանցուց Քրիստոս:

Ձրաներուն տեղը զբաւող գիրքը վերէն վար կը կարդացուին գծուած անօթին պարունակութենէն զգուշանալու պատուէր մը:

Թամըզ Բ. ԱՐՄԱՆԱՍԻԱՆ

Տարեկան բաժանորդագին՝ 6 դահ. արծաթ կանիթիկ, ամէն տեղւոյ համար:

Ամերիկայի Միտիւնարաց Ընկերութեան կողմէն Արտօնատէր ձ. Բ. ԿԻՐՆ Տնօրէն—Խմբագիր Հ. Ս. ՊԱՐՆԸՄ

ԿՈՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ  
Ի ՏՊԱՐԱՆԻ Ա. ՅԱՐՈՒ ՊՅՈՍԵՍՆԻ  
Ձինձանճըրը Եօզուշու. Ամերիկեան խան